ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/53

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.02.2019թ. թիվ 26/26/3104-19 գրությամբ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 06952546/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.02.2019թ. թիվ դվա/613 գրության հիման վրա, 26.02.2019թ. նախաձեռնել է «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.02.2019թ. թիվ դվա/613 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգում 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: սահմանված կարգով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Բիո-Քիմ» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրել է օրենսդրոթայմբ սահմանաված ժամկետում, սակայն դրանց մեջ առկա են եղել անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

«Բիո-Քիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշեց 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բիո-Քիմ» ՍՊԸ-ն 12.03.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գործի հակիրճ նկարագրությունը.

«Բիո-Քիմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 4 կետի 4.2 ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ մասի /հայտը պատրաստելու հրահանգի/ 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն արձանագրվել է, որ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 3 «անվանում» սյունակում ներկայացրած ապրանքի անվանումը /24-րդ չափաբաժնի մասով BC CALCIT, 26-րդ չափաբաժնի մասով BC CHELATOGEL/ չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով սահմանված անվանումներին /24-րդ չափաբաժնի մասով՝ Կալցի հիդրոքսիդ, 26-րդ չափաբաժնի մասով EDTA մածուկ/ ...:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները և արդյունքում 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և 24-րդ, 26-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 4 կետի 4.2 ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ մասի /հայտը պատրաստելու հրահանգի/ 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ մասի /հայտը պատրաստելու հրահանգի/ 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որոնցում գնահատող հանձնաժողովի կողմից 24-րդ և 26-րդ

չափաբաժինների մասով արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 3-ում:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը 07.02.2019թ. ծանուցել է «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Բիո-Քիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի կարողացել շտկել արձանագրված անհամապատասխանությունները «eauction.armeps.am» համակարգի խափանված լինելու հանգամանքով, քանի որ ամբողջ մեկ օր չի գործել «ՇՏԿԵԼ» սեղմակը:

Նշված խնդրին լուծում տալու համար Ընկերությունը ամբողջ օրը փորձել է կապ հաստատել ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծի հետ՝ առաջացած խնդիրը բարցրաձայնելու և լուծում խնդրելու համար, սակայն «Թեժ գիծ» ծառայությունը չի պատասխանել Ընկերության զանգերին:

Այնուհետև, «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հեռախոսազանգով կապ է հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի հետ՝ հայտնելով, որ «eauction.armeps.am» համակարգի խափանված պատճառով չի գործում «ՇՏԿԵԼ>> սեղմակը, որի հետևանքով խնդրել է տրամադրել որևէ էլեկտրոնային հասցե՝ շտկված փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու համար: Սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը հայտնել է, որ քանի որ մրցույթն անցկացվում է էլեկտրոնային աճուրդի համակարգով, այլ եղանակով, քան էլեկտրոնային աճուրդի միջոցով ուղարկված փաստաթղթերը չեն կարող քննարկվել և բավարար գնահատվել հանձնաժողովի կողմից: Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը հրաժարվել է Ընկերությանը տրամադրել որևէ էլեկտրոնային հասցե:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

Նշված խնդրի կապակցությամբ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն 2019թ. փետրվարի 20-ին գրավոր դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզաբանումներ ստանալու համար (կցվում է):

Ի պատասխան Ընկերության 20.02.2019թ. գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը պահանջել է հայտնել, թե նշված աճուրդի որ չափաբաժիններով է առաջացել խնդիրը (կցվում է):

Վերոհիշյալ գրությանն ի պատասխան՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն 2019թ. մարտի 4-ին ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը՝ խափանված չափաբաժինների մասով (կցվում է):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն իրականացրել է հնարավոր բոլոր քայլերը՝ շտկված փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու համար, սակայն աճուրդի համակարգի խափանման պատճառով զրկվել է այդ փաստաթուղթը համակարգին կցելու և Պատվիրատուին ուղարկելու հնարավորությունից: Իսկ Պատվիրատուն էլ հրաժարվել էր ներկայացնելու գոնե էլեկտրոնային հասցե, որպեսզի Ընկերությունը կարողանար ուղարկել շտկված փաստաթղթերը:

Հարգելի պարոն Է. Սարգսյան, խնդրում ենք «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ իրականում մասնակիցը ձեռնարկել է բոլոր միջոցները՝ փաստաթուղթը գնահատող հանձնաժողովին սահմանված ժամկետում ներկայացնելու համար, սակայն համակարգի միջոցով փաստաթղթերն ուղարկելու հնարավորությունից զրկված լինելով չի կարողացել ուղարկել փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները, Ընկերության դրսևորած վարքագիծը և «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը, Աննա Սիմոնյանը և Վերա Կարապետյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3104-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.02.2019թ. թիվ դվա/613 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.01.2019թ. նիստի թիվ 4, 31.01.2019թ. նիստի թիվ 4, 11.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից 12.03.2019թ. ներկայացված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ատամնաբուժական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 12-րդ, 24-րդ, և 26-րդ չափաբաժինների մասով:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի՝

-24-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «Կալցի հիդրոքսիդ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «Ռադիոպակ կալցիումի հիդրոքսիդի մածուկ -2,5 մլ քաշով, ներարկիչի տուփով: Ապրանքները պետք է ունենան Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3. Արտադրող կազմակերպության կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր: 4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանեիության

ժամկետի ½-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողի կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և/կամ որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը:

-26-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «EDTA մածուկ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները. «հատուկ բաղադրությամբ քիմիական գել արմատախողովակները լայնացնելու համար: Ապրանքները պետք է ունենան Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): 2. Արտադրողին տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ): 3,. Արտադրող կազմակերպության կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր: 4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանեիության ժամկետի ½-ը: Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը: Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողի կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և/կամ որակի հավաստագիրը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացվող տեխնիկական բնութագրի հետ պետք է ներկայացնի ապրանքային նշանի, արտադրողի և ծագման երկրի մասին (ապրանքի նկարագիր) տեղեկատվությունը»:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 16.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության հավելվածի համաձայն՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ Աճուրդի 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով:

«Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել Հավելված 3-ով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«24-րդ չափաբաժին. Անվանումը՝ BC CALCIT, ապրանքային նշանը՝ BC, արտադրողի անվանումը՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ(...)»:

«26-րդ չափաբաժին. Անվանումը՝ BC BC CHELATOGEL, ապրանքային նշանը՝ BC, արտադրողի անվանումը՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ(...)»:

Հանձնաժողովի 11.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ (հավելված 3) «անվանում» սյունակում ներկայացված ապրանքի անվանումը /24-րդ չափաբաժնի մասով՝ BC CALCIT, 26-րդ չափաբաժնի մասով՝ BC CHELATOGEL/ չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկանան բնութագիր-գնման ժամանակացույցով

սահմանված անվանումներին /24-րդ չափաբաժնի մասով՝ Կալցի հիդրոքսիդ, 26-րդ չափաբաժնի մասով՝ EDTA մածուկ/:

- «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 3) անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես, ապրանքները պետք է ունենան Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները): (ISO, GMP, CE Mark կամ այլ): 4. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանեիության ժամկետի ½-ը: Թիվ 2 (արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ), 3 (Արտադրող կազմակերպության կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր) կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ:

Նույն կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Հնաձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշեց 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի կարողացել շտկել արձանագրված անհամապատասխանությունները «eauction.armeps.am» համակարգի խափանված լինելու հանգամանքով, քանի որ ամբողջ մեկ օր չի երևացել «ՇՏԿԵԼ» սեղմակը: Ընկերությունը փորձել է կապ հաստատել ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծի հետ՝ առաջացած խնդիրը բարցրաձայնելու և լուծում գտնելու համար, սակայն թեժ գծի ծառայությունը չի

պատասխանել Ընկերության զանգերին: Այնուհետև, «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հեռախոսազանգով կապ է հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի հետ՝ տեղեկացնելով առաջացած խնդրի մասին և խնդրել է տրամադրել որևէ էլեկտրոնային հասցե՝ շտկված փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու համար: Սակայն, Հանձնաժողովը հայտնել է, որ քանի որ մրցույթն անցկացվում է էլեկտրոնային աճուրդի համակարգով, այլ եղանակով, քան էլեկտրոնային աճուրդի միջոցով ուղարկված փաստաթղթերը չեն կարող քննարկվել և բավարար գնահատվել հանձնաժողովի կողմից:

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 14.03.2019թ. գրությամբ դիմել է էլեկտրոնային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից 05.03.2019թ. ներկայացված բողոքի քննության նպատակով իրականացվող նիստերին ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունը:

Ընթացակարգի քննության նպատակով հրավիրված նիստի ժամանակ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նկատեց, որ սովորաբար «ՇՏԿԵԼ» սեղմակը գտնվում է էկրանի աջ անկյունի վերին հատվածում, ինչը նկարագրված է նաև «Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման» ուղեցույցում:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե հնարավո՞ր է արդյոք, որ Ընկերությունը ամբողջ մեկ օր չկարողանա տեսնել «ՇՏԿԵԼ» սեղմակը, ինչի հետևանքով վերջինիս կողմից որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանության շտկումը դառնար անհնարին, E-auction համակարգը սպասարկող ընկերության ներկայացուցիչը՝ անդրադառնալով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացուցչի վերը նշված պնդմանը, հայտնեց, որ «ՇՏԿԵԼ» սեղմակը գտնվում է ոչ թե էկրանի աջ անկյունի վերին հատվածում, այլ «ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ» տվյալ չափաբաժնի աջ ներքևի հատվածում, որը տեսանելի է դառնում այն ժամանակ, երբ սքռոլն իջեցվի մինչև վերջ:

Ընկերության ներկայացուցչի այն հարցին, թե այդ դեպքում ինչու՞ է «Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման» ուղեցույցում տվյալ գործողության նկարագրությունը

բացակայում, «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նկատեց, որ տվյալ հարցի հասցեատերը ոչ թե իրենց կազմակերպությունն է, այլ ՀՀ ֆինանսների նախարարությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի

առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու

մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ ֆինանսների նախարարի 28.03.2018թ. N 118-Ա հրամանով հաստատված հրապարակած <<Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման>> ուղեցույցի համաձայն՝

որակավորման փաստաթղթերի շտկման համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունի <<Ավելացնել որակավորման շտկում>> կոճակը /էջ 103/:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ Աճուրդի 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով:

- Հանձնաժողովի 11.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ:

- Հնաձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սակայն «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշել է 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- ՀՀ ֆինանսների նախարարի 28.03.2018թ. N 118-Ա հրամանով հաստատված հրապարակած <<Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման>> ուղեցույցի համաձայն՝ որակավորման փաստաթղթերի շտկման համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունի <<Ավելացնել որակավորման շտկում>> կոճակը /էջ 103/:

- E-auction համակարգը սպասարկող ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «ՇՏԿԵԼ» սեղմակը գտնվում է ոչ թե էկրանի աջ անկյունի վերին հատվածում, այլ «ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ» տվյալ չափաբաժնի աջ ներքևի հատվածում, որը տեսանելի է դառնում այն ժամանակ, երբ սքռոլն իջեցվում է մինչև վերջ, սակայն նշված ուղեցույցում տվյալ գործողության նկարագրությունը բացակայում է:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության ներկայացուցչի այն հարցին, թե այդ դեպքում ինչու՞ է «Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման» ուղեցույցում տվյալ գործողության նկարագրությունը բացակայում, «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ տվյալ հարցի հասցեատերը ոչ թե իրենց կազմակերպությունն է, այլ ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունն իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի շտկումն իրականացնելիս առաջնորդվել է

«Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման» ուղեցույցում առկա տեղեկատվությամբ, ըստ որի որակավորման փաստաթղթերի շտկման համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունի «Ավելացնել որակավորման շտկում» կոճակը, և, չգտնելով նշված հատվածում հիշյալ կոճակը, չի կարողացել ապահովել արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար անհրաժեշտ գործողությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.02.2019թ. թիվ 26/26/3104-19 գրությամբ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 06952546/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ